և զտասն կրօնաւորս իմաստուն քահանայս ի հապէշրստան ի քաղաքն Թագաւորանիստ ի Կեօնտէր։

Զայսմ թղթոյ Ս. Հօր Իգնատիոսի խօսի երեւելի Հայրն Օրլանտինի պատմագրողն Ընկերութեան Յիսուսի։ Եւ եւս Հ. Մաչէտոնն ի գիրս իւր մակագրեալն « Յաղագս պայծառ Բիէթրի»։ Այլ եւս մասնաւորապէս խօսի զայսմանէ Աբբայն Նիզոլոյ տէ Լակնայ։...

... Աբդ յորժամ ի Ս. Իգնատիոսէ և ի ծայրագոյն ժԳ Գրիգոր Քահանայապետէն առաքեալքն հասին ի հապէշ Թագաւորանիստ քաղաքն Կեօնտէր՝ այսինքն է՝ Պատրիարգն, երկու եպիսկոպոսքն և տասն ճիզվիտ կրօնաւորքն, ընդ առաջ ելին սոցա իշխանքն, և այն հին լաթին մեծապատիւ բորթուկէզ քահանայն իւր եկեղեցականօքն հապէշից։ Եւ Թագաւորն հապէշից Գլաւտիոսն մեծ ուրախութեամբ ընկալաւ զնոսա. և յետ զաւուրս ինչ պատուելոյ անդ ի պալատին՝ առաքեաց զնոսա ընդ այն առաջին լաթին քահանայի ի Ֆրեմոնայ գիւղն ուր էին ժողովեալք ամենայն բորթուկէզքն, որ յոյժ պատուական դաշտատեղի ջրահոս և բուրաստանք բազումք էին. և զամենայն պիտոյս նոցա առաքէր Թագաւորն. և երկու անգամ ի շաբաթու պարտէին գնալ ի սեղան Թագաւորին. և սկսան ուսանիլ գլեզուս նոցա և սերմանել աստ և անդ յամենայն եկեղեցիս զհոգեշահ պտուղս իւրեանց։ Ի տունջեան ի Կեօնտէր շրջէին քարոզութեամբ, և ի յերեկոյին գնային ի Ֆրեմոնայ գիւղն, ուր կազմեցին վանս և եկեղեցիս, և պտուղք բազումք լինէին և լուսաւորէին։

Աբդ յորժամ սկսան վարել ուրախութեամբ և ուղղափառապէս զկեանս իւրեանց զամս հնգետասան կամ քսան, նախանձեալ ընդ այն բանսարկուին Բելիարայ՝ էարկ ի սիրտս հապէշու քահանայից զհին մոլորաշաւիղ աղանդս նոցա. որոյ վասն միաբանեալ քահանայք սկսան տրտնջել և ասել թէ զի՞ է զի յեկեղեցիս մեր զայլ և այլ անուանս յիշեն, զՊապն Հռոմայ և զԹագաւորն Բորթուկիզու, որ յառաջն ոչ էր, և այն որ էրն և յիշէին զսուրբ Դիոսկորոս, այժմ ոչ յիշի, և ընդէ՞ր է այս։ Այլեւս այն լաթին քահանայքն ո՞յք են որք մեր եկեղեցեացն իշխեն քննելով և հրամայելով։

Եւ այսպէս միաբանեալ ամենայն քահանայք հապէշու ետուն զնամակ Թագաւորին, թէ Մեք կամիմք զմեր զառաջին հին աղանդն նորոգել, և զայնոսիկ լաթին քահանայսն ոչ ընդունիմք։ Այլ եւս այն լաթին Բորթուկէզք ոչ կամիմք թէ ի սահմանս մեր բնակիցին։

Եւ Սիմոն կամ Գլաւտիոյ Թագաւորն ընթերցեալ զնամակս նոցա կոչեաց զամենայն մեծամեծ իշխանսն և խորհեցան թէ այս որպիսի՞ ապերախտութիւն է զոր կամին առնել. զի եթէ նոքա, այսինքն Պապն և Թագաւորն Բորթուկիզու ոչ օգնէին մեզ, մեք մինչեւ ցայժմ ցիր և ցան լինէաք, և մահմետականք իշխելոց էին։

Յայնժամ առհասարակ միաբան ամենայն իշխանք ասացին թէ՝ մեք թէ ըստ կամաց քահանայից մերոց գնասցուք, գուցէ զարձցին զօրքն Բորթուկիզու ի վերայ մեր. ուրեմն կերպիւ իւիք զոմանս ի սոցանէ հանցուք ի կախաղանս, զի լռեսցեն այլքն։

Վասն որոյ և Թագաւորն եհան հրաման, թէ ընտրեցէք ի ձէնջ զարս երկոտասան, որք եկեալ առ մեզ ի պալատն խորհեսցուք ընդ նոսա զլաւն, և զձեզ անհոգս արասցուք։

Եւ քահանայքն ի մէջ իւրեանց ընտրեցին զարս գլխաւորս երկոտասան, և առաքեցին ի պալատն։ Եւ Թագաւորն Սիմոն կամ Գլաւտիոյ սիրով ընկալաւ զնոսա ասելով թէ յայսմ գիշերի կացջիք աստ, և եկեսցեն իշխանք, և ապա խորհեսցուք ի միասին։ Եւ ի մէջ գիշերի զայն զերկոտասան գլխաւոր քահանայսն հանին ի կախաղան շուրջ զպալատաւն։

Եւ ընդ առաւօտսն ընդ այնոսիկ տեսեալ զայս իւրաքանչիւրոցն, ի փախուստ դառնային բնաւ հետեւեալքն։ Այլեւս եհան Թագաւորն զմունետիկս կարդալ՝ թէ ո՛ որք յայս միտս կախեալ անձանցն իցէ,